

նոյն հետ . առաջնոյն դիմաց անկիւնն է 64 աստիճան , երբ յարթունս կը հասնի 75 աստիճան կ'ըլլայ , տղայութեան ժամանակ՝ 82 աստիճան , իսկ սաղմին՝ 85 աստիճան . երկրորդին դիմաց անկիւնն է 82 աստիճան , տղայութեան ժամանակ՝ 87 աստիճան , և սաղմին՝ 89 աստիճան :

ԿՈՎԱՍՈՒՑԻՒՄ

ՄԱՐԱՏԱՑԻ

Սաղմ . 89 աստիճան

Տղայ . 87

Այլ . 82

Սաղմ . 85 աստիճան

Տղայ . 82

Արդունք . 75

Այլ . 64

Այս ցուցակիս ըստ բաւականին կը տեսնուի թէ ժամանակ մը կայ որ մաքոյացին ու կովկասայինը դիմաց մի և նոյն անկիւնն ունին . և երբ մէկունը ինչուան 64 աստիճան կ'իջնէ , մէկալինք գրեթէ կը դադրի : Ուրեմն Ճերմակին դիմաց անկիւնը կը դադրի զարդանալէն :

Օ արգացման դադարմամբը կը մէկնուի նաև կովկասայինոյն ու Հնդկին անդաց տարբերութիւնը . մէկունը մէծէ , մէկալինք պատիկ . վասն զի Ճերմա-

կին քիթը կը մեծնայ , իսկ սեռնը նոյն կը մնայ : Դժաջնոյն քթին վերի կողմը զրեթէ տափարակէ աղայութեան ժամանակ , տարիքին հետ այն մասն ալ կ'աձի : Ուստի զարգացման այս անհաւասարութեամբս բնութիւնը մէկուն կ'առատաձեռնէ , մէկալին կը խնայէ :

Հաւանական կարծիք մը կայ թէ Վարիկէի ներսերը պոչաւոր մարդիկ գտուին . այս բանս իրաւ ալ ըլլայ , մեկնութիւնը դիւրաւ կրնայ տրուիլ անոնց ողնայարին չափազանց զարգացմամբը : Կովկասայինոց մէջ ալ կը գտուին մարդիկ , որնց ողնայարի ոսկրին ծայրը քիչ մը գուրս ցցուած կ'ըլլայ : Ուրեմն զարմանք չէ որ այն ափրիկեցի ժողովը դորոշոց այս անկանոնութիւնը աւելի շատ ու յաճախ եղած ըլլայ :

Համառօտ աչք մը տալով այս ամենայն տարբերութեց , որոնցմով մարդկային այլ և այլ ցեղերը մէկմէկէ անդադար կը հեռանան , կրնանք ըսել թէ չկայ այնպիսի տարբերիչ հանգամանք մը որ կարելի չըլլայ մեկնել զարգացման անհաւասարութեամբը :

ՄԱՆԻ ԳԻՏԵԼԻՔ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ

Դաշտական գուարաւունէն և լեռգիրնեց : — Գաղ. վայ մէջ հիմա ընդդ ամէնը 1037 տպարան կայ և 1092 օրոտիր : Այն տասը գաւառաները , որ ու ընկերէն աւելի տպարան ունին , ասոնք են . Սէն , Նոր , Աէն Ստորին , Անցք Գալեայ , Հէրոյ , Գալ Հատոս , Ժիրոնտ , Բարձր Կառոն , Հռոն , Հռոնց Բերանք : Խւրաքանչիւր գաւառ միջական հաշուու 12 տպարան ունի :

Գաղընոյ տպարաններուն մէջ գրեթէ 9,500 շառլ կան . Բարիզու մէջ միայն 2,600 շարող կայ , լին՝ 120 , Պորայ 416 , Մարսիլիա 112 , Լիլ 110 , Դուլուզ՝ 102 , Ռուան՝ 90 , Դուր՝ 86 , Նանդ՝ 78 . Սդրալպուրի՝ 64 , Պլանսոն՝ 60 , Աֆան՝ 54 : Բաց ի տասնյմէ , կան նաև իբր 3,000 տպագրողք , 900 որբագրողք , վերակեցուք , համբակալք , 350 տուաջնորդք :

Ամէն տարի տպուած գրուածոց միջական թիւն է 8,000 , ՚ի բաց առեալ ձուլագրում¹ գրուած-

ները , որոնք ամէն տարի , ամէն տմիս կը տպուին , և անթիւ են :

Տպարաններուն տարեկան արգասիքն է իբր 25 միլիոն ֆրանգ . միայն բարիզու տպարաններուն է 15,247,211 ֆրանգ :

Մատերս Գաղընոյ ներքին գործոց ենթապաշտուացուայ մը բարիզու մէջ եղած տպագրութեանց վայ գրուած մը հրատարակեց , որուն մէջ կը ցուցընէ թէ բարիզ 510 օրագիրք կը հրատարակուին , որոնցմէ 40 հատքաղաքական են , և 470 հատք բանափարական , արուեստական , ուսումնական , և այլն : Անցեալ տարի , որ է 1857 , նոր օրագիրք 108 հատ սկսան . բայց անոնց մեծագոյն մասը գաղընուած ուրիշներուն տեղիք տալով . վարդի նման մէկ օր մը միայն կեանք ունեցան :

Կաղացի հանգ՝ ՚ի Գաղընոյ : — Գաղընոյ մէջ 533 հանք կը ճանչցուին կապարի , որոնցմէ 314ին է . բակն ապէկ որոշ է . բայց 7 հանք միայն կը բանին , որոնք տարուէ տարի 2,400,000 հաղարակրամ կապար կու տան : Իսկ Գաղընոյն տարուէ տարի 4,910,000 հաղարակրամ կապար կ'ընդունի , ու կը սպառէ չգործուած ու գործուած կապար

¹ Գլ . Clichés.

18,439,844 հազարակրամ տարին : Դրուեն Գաղ-
վա կը մտնէ տարին 26,613,197 հազարակրամ
մաքուր կապար , որոնցմէ 8,393,535 հազարա-
կրամ նորէն գուրս կը խրկէ այլ և այլ ձևերով :
Ասկէ կը տեսնուի թէ Գաղվայ մէջ գեռ շատ ե-
տև է կապարի հանքաց գործածութիւնը :

Բանքայի ճարտարագութեան , Անդղիս : — Անդղիս
Երկրագործութեան 1,460,896 հոդի զբաղած
են . առողջմէ 1,038,791 հոդին առանին ծառայու-
թեան , և 501,465 հոդի ալբամիակի ճարտարու-
թեան : Յամին 1856 ներս մտած բամբակն էր
900 միլիոն անգիտական վարս , որոնց 700 միլիոնը
միայն Ամերիկան տուաւ , մնացածն ալ Արևելեան
Հնդկաստան : Կոյն տարին Անդղիսյէն դուրս ե-
լած գործուած ու չգործուած բամբակին գինն
էր 2,797,271,425 ֆրանգ , իսկ առանձինն գոր-
ծուած բամբակին գինն էր 957,119,250 ֆրանգ .
այսինքն դուրս ելած բամբակին բոլորական գոյնն
33 առ 0/0 . Այս համեմատութիւնս աւելի շատ
էր 1846ին , վասն զի այն տաենն էր 46 առ 0/0 .
հարէն երթարով կամաց կամաց նուազեցաւ , ուր
ընդհակառակն բրդին ու մետաքսին համեմատու-
թիւնը աճեցաւ :

Այսէւիս ունոյ հանգելը : — Վերջի տասը տա-
րուանս մէջ Սիստերիոյ հանքերէն ելած ոսկին ան-
համեմատ կերպով աճեցաւ : Առանձնականաց
հանքերէն 1829ին ելեր էր 4 փուտ և 10 լիուրա
ոսկի , որ է ըսել իբր 16 քքա ոսկի . իսկ 1856ին
ելած ոսկին էր 1136 փուտ և 24 լիուրա . որ է
ըսել իբր 14,463 քքա : Հիմա 303 հանք կը բանին ,
և աէրութիւնը ելածին 20էն ինչուան 35 առ հա-
րիւր ինքը կ'առնու իբր հարկ :

Գալիքունիսոյէն դուրս ելոծ ոսկոյն գունակութե-
նը : — Ըստ հաջորի վաճառականական լրագրի
մը , 1848էն մինչև 1857 միայն Գալիքունիսոյէն
համաշխարհական վաճառականութեան մէջ մը-
տած ոսկւոյն գումարն է 488,795,065 տոլլար , և
տոլլարը 5 ֆրանգ սեապելով , կընէ 2,443,975,325
ֆրանգ , կամ թէ տարին 271,590,814 ֆրանգ :
Հոս դիտելու է որ այս գումարն է մաքսատունէն
անցած ոսկւոյն գինը , վասն զի անմաքս փախ-
ցուած ոսկւոյն քանակութիւնն անծանօթ է :

Բարին ողուած լուսաւորութեան իունի գունակու-
թեան : — Բարին լուսաւորութեան կազին գինը
զգալ կերպով վար իջնելուն համար գործածու-
թիւնը շուած մը շատ յաճախեց : Հետեւ ալ ցուցա-
կէն կը տեսնուի թէ 1853էն ինչուան 1857 որչափ
տաեր է այս գործածութիւնը .

1853 . . .	32,057,009 իուր . մետր
1854 . . .	33,441,504
1855 . . .	37,667,507
1856 . . .	44,034,611
1857 . . .	53 միլիոնէն աւելի :

Ամբույ Սիստեւնականգոյ դրամա թէւ : — Ա-
մբիկոյ Միացեալ նահանգաց տարածութիւնն է

8,430,825 քառակուսի հազարամեդր , բնակիցը
23,191,347 հոդի . իսկ վաճառականութիւնն է
հազարաւոր միլիոններու տարին : Ի վերայ այսոր
ամենայնի դրամոց թիւը համեմատութեամբ քիչէ
է . վասն զի 1793էն ՚ի վեր կտրուած ստակն է
84,391,974 լիրա սդեռլին ոսկի . 21,283,279 լի-
րա սդեռլին արծաթ ու 334,090 լիրա սդեռլին
պղնձ , կամընդ ամէնը 106,009,144 լիրա սդեռլին
լին , որ է ըսել 2,650,228,600 ֆրանգ :

Մշակաստանի վելի ՚ի հնդկաստանի
բերոց գլխաւորներէն մէկն ալ լեզակն է , և Պէն-
կալայի լեզակը շատ աւելի յարգ ունի քան թէ
Վնդիլեան կզզիներէն ու Ամերիկայի ուրիշ կող-
մերէն եկած լեզակը , վասն զի Անդղիացիք այս
բայսիս մշակութիւնը շատ կատարելագործեցին :

Լեզակին բերքն էր 1775ին իբր 988,000 հա-
զարակրամ . բայց 1828էն ետև տարին 3,700,000
հազարակրամ՝ ինչուան 4,500,000 հազարակրամ
լեզակ կ'ելլէ : Ճարտարութեան այս մասին գլուխ
եւրոպացիք են , որոնք 40 առ 0/0 անխառն շահ
ունին երբ տարին յաջող կըլլայ : Այս վերջի տա-
րին հնդկաստանի պատերազմին պատճառաւ լե-
զակին բերքն ալ շատ նուազեցաւ , և անցեալ օ-
գոստոսի կիսուն 2,938 մնառուկ նուազ լեզակ մը-
տաւ կալքադա համեմատութեամբ նախընթաց
տարուոյն : Ընդհակառակն Մատրասու գաւառուէն
388 մնառուկ լեզակ դուրս ելաւ սովորականէն ա-
ւելի :

ԲՆԱԲՐԱՆԱԿԱԾԱՆ

Երիւն իամ գուղուա յագնիացնեւ վարչուածունէ : —
Ունելիք մը , կամ ալ ազէկ՝ պղոտի երկթէ քը-
ծուար մը առ , որ փայլուն ըլլայ ու ամենկին
ժանդ չունենայ , և երկայնութեանը վայ գետնէն
50 կամ 60 հարիւրորդամեդր բարձր բանած՝ յան
կարծ թող որ ձիշգ ծայրովք երթայ սալշյատակ
կարծր գետնին զարնու : Այս յանկարծական
զարնուածքէն մետաղին մասնըկունքը ցնցուելով .
մագնիսական յատկութիւն կ'առնու երկաթը :
Եւ այս բանիս փորձ , երբոր բարակ ասեղ մը գա-
ւաթով ջրոյն երեսը լոզացընէս ամենանուրբ բայց
մուռած թղթի մը վայ պառկեցուցած , և այն
երկթին ծայրը այս ասեղին մօտեցընես , կը տես-
նես որ երկթէ քծուարը զան վը իրեն քաշելով .
թղթովք ետեւն կը քալէ : — Դարձեալ այն քը-
ծուարը նոյնական գետին զարկ բայց հակառակ
ծայրովք , և վերջը նորէն ասեղին մօտեցուք , ալ
ասեղը ոչ թէ կը քաշէ , հապա մէկ դի կը վանէ :

ԱԶԴԱԲՐԱԲՈՒԹԻՒՆ

Օրտագրիս վետրուարի ամսաթերթին մէջ , ե-
րես 35 տող 28 . գիւղուկաւ Մունի տպուած է .
կարդալու է Մունի :